

## **ՕԳՈՍՏՈՍ ՕԿՏԱԿԻԱՆՈՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՒԴԵԼԸ**

Պետության կառավարումը, հատկապես բեկումնային շրջաններում, բարդ և հատուկ պատրաստվածություն պահանջող արվեստ էր: Իշխողների մտավոր ճկունությունից, քաղաքակրթական անցումային բնույթը հասկանալու և խնդիրների ոչ ստանդարտ լուծում գտնելու կարողությունից է կախված կհաջողվի արդյոք տվյալ համակեցությանը պատասխան տալու անցումային ժամանակի մարտահրավերներին:

Պետության և հասարակության կառավարման գործում հատուկ դերակատարություն ունի մշակութային քաղաքականությունը, քանի որ մշակույթը գաղափարախոսական մոդելների տարածման գործիք է:

Հողվածում մենք փորձել ենք քննության առնել Օգոստոս Օկտավիանոսի մշակութային քաղաքականությունը: Մեր խնդիրն էր նաև պարզել ի՞նչ ազդեցություն է ունեցել վերջինիս մշակած և հետևողականորեն կիրառած մշակութային քաղաքականությունը անցումային շրջանի դժվարությունները հաղթահարել և նոր դարաշրջանին համապատասխանող մտահոգևոր մթնոլորտ ստեղծելու գործում:

Վերոհիշյալ մշակութային կառավարման մոդելներն իրենցից ներկայացնում էին քաղաքական մի գաղափարախոսություն, որտեղ իշխանության ղեկին գտնվող անձը պատմական որոշակի իրադրությունից դրդված գտնում է մի մեթոդ կամ լծակ, որի միջոցով կարող է առավելապես մեծ ազդեցություն ունենալ թե՛ իշխանության բացարձակացման գործում, թե՛ հասարակությանը վերահսկելու, թե՛ ազգային զարթոնքի, և թե՛ երկրի համաշխարհային ճանաչման հարցում:

Ահա այսպիսի մի մոդել գործածեց Օգոստոսը, որի տված պտուղները ակնառու են և երևում են նույնիսկ Հռոմեական կայսրության փառքի ուղին ուսումնասիրելու ժամանակ:

Օգոստոսը, գործածելով այս քաղաքականությունը և դնելով պետական քաղաքականության հիմքում, այն դարձրեց պաշտոնական գաղափարախոսությանը ծառայող ուղի և անխախտելիորեն ի կատարածեց:

Կենտրոնական գաղափարները, որոնք միավորում էին պաշտոնական գաղափարախոսության մնացած տարրերը կայսրության շրջանում, դա Հռոմի հզորության և անմահության ու նրա առաջնայնության պարտքն էր, որն այժմ սկսեց համընկնել Օգոստոսի պարտքի հետ, որն իրենից ներկայացնում էր ղեկավարել բոլոր ժողովուրդներին՝ բերելով

Որանց խաղաղություն և երջանկություն<sup>1</sup>:

Չռոմեական կայսրությունը զբաղեցնում էր հսկայական տարածք՝ բազում էթնիկական խմբերով, որոնք գտնվում էին հասարակական-տնտեսական և մշակութային զարգացման տարբեր մակարդակների վրա: Այդ տարբերությամբ պայմանավորված անիրաժեշտ էր ստեղծել սոցիալական, տնտեսական, գաղափարախոսական և մշակութային միասնություն:

Օգոստոսի իրականացրած գործունեության հետևանքով հայտարարված փոփոխությունները պաշտոնական գաղափարախոսության տարան նրան և ձևավորվեց միապետության իրավահաջորդի խնդիր<sup>2</sup>: Բնականաբար, այս խնդիրը դիպավ նաև հասարակական կարծիքին: Օգոստոսի կառավարությունը շատ լավ հասկանում էր նոր համակարգի գաղափարական պաշտպանության անհրաժեշտությունը, ինչպես նաև պետական քաղաքականության տարածումը:

Իրավական առումով Օգոստոսը կատարեց մի շարք բարեփոխումներ, որոնք կապվում էին երկու հիմնական ուղղությունների հետ՝ *գաղափարախոսական և կրոնական*<sup>3</sup>:

Դառնալով միապետ Օկտավիանոսը, ինչպես հայտնի է, չափազանց զգույշ անցավ նոր համակարգի ձևավորման: Ինչպես ինքը, այնպես էլ հնարավոր է նրա ամենամոտ օգնականները հասկացան, որ նոր համակարգի մեջ գրականությունը կխաղա ոչ պակաս դեր:

Ինչպես նշում էր Շտաերմանը անտիկ մշակույթը ծագել է, որպես քաղաքացիական հասարակության մշակույթ<sup>4</sup>: Այսինքն, Օգոստոսը լավ էր հասկանում, որ մշակույթը կարելի է ծառայեցնել նույն հասարակության համար իր գաղափարական ազդեցության տարածման համար:

Մշակույթի զարգացման համար մեծ նշանակություն ուներ խաղաղությունը, որը հաստատվեց Օգոստոսի իշխանության գալուց հետո<sup>5</sup>:

Օգոստոսի ժամանակաշրջանի մշակույթը իրենից ներկայացնում է որոշակի միասնություն: Մշակույթի առանձին բնագավառներ այդ ժամանակ հասնում են իրենց զարգացման բարձրակետին: Այդ ժամանակվա մշակույթը սերտորեն կապված է քաղաքականության հետ<sup>6</sup>:

Օգոստոսի ժամանակաշրջանի ստեղծագործությունները ունեն մեծ նշանակություն ոչ միայն այդ ժամանակաշրջանի համար, այլ նաև

համաշխարհային պատմական բնույթի են: Այդ իսկ պատճառով էլ կան հիմքեր այդ ժամանակը անվանել հռոմեական գրականության «ուսկե դար»<sup>1</sup>:

Օգոստոսի կառավարման համակարգի իրականացրած մշակութային քաղաքականությունը անխախտելիորեն կապված է նրա մոտ ընկերոջ Մեկենասի անվան հետ, նրա անունը դարերով մնացել է պատմության մեջ, որը նշանակել է գրականության և արվեստի հովանավորող անձ: Փաստորեն, այս հատուկ անունը այժմ վերածվել է հասարակ անվան: Հավանաբար Օգոստոսի ամենամեծ հաջողությունը, որը կապված էր գերազանցապես Մեկենասի գործունեության հետ, դա այն էր, որ նա կարողացավ դարի մեծ և հեղինակավոր գրողներին օգնելու գրել այնպիսի ստեղծագործություններ, որոնք անհրաժեշտ էին կառավարման առկա համակարգին գաղափարապես և մտածված կերպով՝ դառնալով նրա գաղափարախոսական հիմքը: Հարցը նրանում էր, թե որքան անկեղծ էին գրողները իրենց ստեղծագործություններում, որպեսզի չստացվեր այնպես, որ կառավարող շրջանների կարծիքները համապատասխանեին իրենց տեսակետներին և տրամադրություններին, որ այդ հետաքրքրությունները առաջնային իրենք իրենք և հասարակական կարծիքը ոչ թե զգացմունքների վրա առաջնորդվեր, այլ մտածեր: Ամենայն հավանականությամբ, նրանք իրապես համոզված էին, որ Օգոստոսը կարող է ստեղծել և պահպանել խաղաղություն և անվտանգություն, վերածնել անկման հասած հանրապետությունը: Սակայն կարևոր էր, որ կողմերը շարժվեին դեմ առ դեմ, որ գրողները գիտակցորեն գնային կառավարման համակարգին ծառայելու և կատարեին նրա պատվերները: Կառավարող համակարգը նույնպես գերազանցապես Մեկենասի օգնությամբ նրանց կպահեր ու կհովանավորեր: Հայտնի է, որ օրինակ, Վերգիլիոսը տիրում էր Նոլա քաղաքում անշարժ գույքի և էսկլիվինեում Մեկենասի այգու կողքին ուներ տուն: Ե՛վ առաջինը, և՛ վերջինը նա կամ ստացել էր հենց Մեկենասից կամ էլ նրա նախածեռնությամբ: Ավելի կոնկրետ կարելի է քննել Հորացիոսին: Ք. ա. 33 թ. Մեկենասը նրան տվեց անշարժ գույք Սաբինյան լեռներում:

Սակայն, ամեն ինչից ելնելով, պետք է ասել, որ բանաստեղծների և գրողների ճանապարհը, որոնց ստեղծագործությունները այսուհետ պետք է հետաքրքրեին կառավարման համակարգին և պետք է ծառայեին նրան ոչ միշտ էր դյուրին և նրանց հարաբերությունները կառավարողների հետ միշտ չէ, որ հարթ էին ընթանում: Նրանց ստեղծագործությունների պարունակությունն էլ, իհարկե, դրվում էր փակ շրջանակների մեջ, որը ստեղծվել էր պաշտոնական շրջանակների կողմից: Այլ դեպքում նրանց հետաքրքրությունը հնարավոր է, որ այդքան մեծ

<sup>1</sup> История древнего мира. Под редакцией И. М. Дьяконова, В. Д. Нероновой, И. С. Свенцикой, Т. 3, Москва, 1989. с. 141.

<sup>2</sup> Шифман И. Ш. Цезарь Август. Ленинград, 1990. с. 137.

<sup>3</sup> Егоров А. Б., Рим на грани эпох: Проблемы зарождения и формирования Принципат. Л., 1985. № 99.

<sup>4</sup> Штаерман Е. М., Кризис античной культуры, М., 1975, с. 236.

<sup>5</sup> Машкин Н. А., История Римской Империи, Москва, 1949, с. 369.

<sup>6</sup> Улլյնի, Принципат Августа: Происхождение и социальная сущность, М.; Л., 1949, с. 556.

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 568:

չլիներ նրանց հաջորդող սերունդների համար:

Մեկենասի և Օգոստոսի շուրջ նրանց լուսավորյալ հովանավորության հետևանքով դեպի գիտությունը և արվեստը հավաքվեց ընտրյալ գրողների խումբ, որոնց արձատները դարձան Հորացիուսը, Վեռգիլիոսը և Լուցիոս Վարիոսը: Դրանց կողքին Մեկենասը բավականին կարևոր տեղ էր տալիս Պրոպերցիուսին<sup>1</sup>:

Քիչ ղեկավարելով նրանց գործունեությունը և նրանց գրական ուղղությունները (Մեկենասը ստեղծագործելու համար նրանց քիչ թեմաներ չէր տվել)՝ Մեկենասը, ինչպես նաև նրա միջոցով Օգոստոսը, հասնում էին իրենց կառավարման համակարգին անհրաժեշտ գաղափարախոսության տարածմանն ու արձատավորմանը:

Մեկենասը իրեն շրջապատել էր հիասքանչ գրողներով ոչ միայն սիրուց դեպի գրականություն և արվեստ, այլ նաև որպեսզի Օգոստոսի շուրջը ուղղի ժամանակի լավագույն մարդկանց և հատկապես պատմիչներին և պոետներին:

Մարքս Վեբերը, համեմատելով Սենեկային և Մեկենասին իրար հետ, նշում է մի տարբերություն, որ Սենեկան նույնպես վերահսկում էր հռոմեական կեսարներից մեկին, ով ենթարկվել էր նրան մանկության տարիներին, սակայն Օգոստոսը հասուն տարիքում էր այն ժամանակ, երբ նրա վրա տարածվեց Մեկենասի վերահսողությունը<sup>2</sup>: Վեբերը այստեղ ցույց է տալիս ոչ թե Օգոստոսի թուլությունը, այլ Մեկենասի հզորության աստիճանը, քանզի վերջինս այնքան հզոր էր, որ կարողացել էր իր վերահսկողությունը հաստատել այնպիսի կայսրի վրա, ինչպիսին Օգոստոսն էր:

Մեկ այլ գրական խմբակ էր համարվում Մեսսալայի գրական խմբակը<sup>3</sup>: Թեև Մեսսալան ևս համարվում էր Օգոստոսի կողմնակիցը, սակայն սկզբնական շրջանի հանրապետական գաղափարները չեն վերացել: Դրանց մասին խոսում է այն հանգամանքը, որ Մեսսալայի խմբակի մեջ, որտեղ ևս մտել էին մի շարք նշանավոր պոետներ, բացակայում էր կայսեր պաշտամունքը, որը բնորոշ էր Մեկենասի խմբակի համար:

Այնուամենայնիվ, այս երկու խմբակները, որոնք այդ ժամանակ գործում էին Հռոմեական կայսրությունում, հսկայական նշանակություն ունեցան երկրի գրական կյանքի ձևավորման գործում: Սակայն սա անվանել միայն գրական գործունեություն, շատ սխալ կլինի, սա ավելի բարձր գնահատական պահանջող գործունեություն էր, որն ապահովում էր Օգոստոս Օգտավիանոսի գաղափարախոսության քարոզումը:

<sup>1</sup> Благовещенский Н. М., Гораций и его время, Варшава, 1878, с. 102.

<sup>2</sup> Լույն տեղում, էջ 90:

<sup>3</sup> Ковалев С. И., История Рима, Л., 1986, с. 497.

Գրականությանը հատկացվող ահռելի դերը կապված էր այն բանի հետ, որ հասարակությունը կարողանում էր անմիջականորեն շփվել այդ ստեղծագործության հետ և իրեն պատկերացնելով այդ հերոսների պատկերով կծգտեր ամեն կերպ օրինակ վերցնել և նմանվել: Փաստորեն ստեղծվում էր օրինակելի հերոսի կերպար, որին կծգտեր նմանվել յուրաքանչյուր քաղաքացի, որից կշահեր միմիայն պետությունը, քանզի անձը իր բաժինը վերցնելով այդ ստեղծագործությունից վերցնում էր նաև այն դրականը, ինչ կապված էր դրա հետ: Ուստի այս միջոցով էլ նրանք ժողովրդի մեջ ներարկում էին իրենց ցանկալի գաղափարները:

Բացի այդ, գրականության միջոցով տիրակալները ամեն կերպ ներկայացնում էին իրենց, ով հանդես էր գալիս ժողովրդին փրկողի դերում և առանց նրա նրանք չէին ունենա այն խաղաղ կյանքը, որ ունեն այժմ: Սա առավել բնորոշ գիծ էր Օգոստոսի համար, ով քարոզում էր թե՛ իր աստվածային ծագումը, թե՛ այն փաստը, որ Ակցիումի ճակատամարտը միայն հնարավորություն կտար հռոմեական ժողովրդին կայուն ու բարեկեցիկ կյանք վայելել:

Ահա սա էր գրականության բարերար ազդեցությունը, որը գործում էր ժողովրդի շրջանում և ժողովրդական զանգվածներին ստիպում էր գնալ իշխանությունների հետևից:

Կայսրության շրջանում պոեզիան հռոմեական մշակույթում զբաղեցրեց այն նույն տեղը, ինչ զբաղեցնում էր հելլենիստական մշակույթում:

Հռոմի պատմության առաջին փուլում պոեզիան հասարակությանն էր պատկանում, բայց ոչ երբեք վերնախավին, երկրորդ շրջանում պոեզիան պատկանում էր վերնախավին, բայց ոչ երբեք հասարակությանը, երրորդ՝ ոչ երկար փուլում, պոեզիան բոլորինն էր, իսկ վերջին՝ կայսրության շրջանում պոեզիան դարձավ պոեզիայինը, որն ապրում էր ոչ այնքան պահանջարկով, որքան իներցիայով:

Պոեզիայի տարածման համար, եթե սկզբնական շրջանում ծառայում էր բեմը և դպրոցը, ապա գիրքը՝ անձնական պահանջով, այնուհետև գրադարանները, ապա կայսրության շրջանում, այն տարածվում էր այս բոլոր միջոցների միասնությամբ<sup>1</sup>:

Ինքն իրեն հասկանալի է, որ նոր համակարգի ժամանակ պետք է ձևավորվեին նոր գիտական դիսցիպլիններ, որոնք հեռու էին ինչ-ինչ քաղաքական տենդենցներից: Հիմար վիճակում չհայտնվեց նաև փոփոխվող հասարակական-քաղաքական կյանքում նաև պատմագրությունը: Դրա պատճառը կարելի է տեսնել առաջին միապետի վերաբերմունքի մեջ: Նա ցանկանում էր վերականգնել նախկին հին բարի կարգերը և չէր կարող չնայել, չհարգել բոլոր այն գրականագետներին, ովքեր գրում և անդրադառնում էին Հռոմի փառավոր անցյալին: Իհարկե,

<sup>1</sup> Голубцова Е. С., Культура Древнего Рима, Т. 1, Москва, 1985, с. 335.

պատմիչը ինչքան ավելի մոտ էր դառնում իր ստեղծագործություններին տիրող կարգերին, այնքան ավելի դժվար էր դառնում նրա ճանապարհը: Անկախ փիլիսոփայությունը չէր կարող խնդիրներ չունենալ միապետության հետ: Հատկանշական է, որ այդ ժամանակների նշանավոր փիլիսոփա Սակստեյը գրում էր հունարեն և նրա հիմնադրած դպրոցը անկում ապրեց հենց նրա մահվանից հետո<sup>1</sup>:

Օգոստոսի կրոնական քաղաքականության մեջ տեսանելի են զարգացման երկու հակադիր ուղղություններ՝

1. վերականգնել նախկին ավանդույթը կրոնական սովորույթների մեջ,
2. փորձում էր գտնել կրոնական փապտարկներ միապետական կառավարման ամրապնդման համար<sup>2</sup>:

Օգոստոսը կրոնական հարցերում հանդես էր գալիս բարեփոխողի կամ, ավելի ճիշտ, հռոմեական կրոնի նորոգողի դերում:

Վերգիլիոսը երկիր համարում էր «առաջին աստվածներին»<sup>3</sup>: Հատուկ տեղ էր հատկացվում դրան նաև արվեստում, որը քարոզվում էր Օգոստոսի կողմից: Սա ուղիղ կապով կարելի է կապել այն հանգամանքի հետ, որ Օգոստոսը համարվում էր աստված երկրի վրա և հենց երկրի աստվածացումը սրա հետ էր կապվում, գտնելով, որ Օգոստոսը հենց երկրից էր իր ուժը ստանում:

Ավելի պակաս ուշադրություն, քան գրականությանը, Օգոստոսը չէր դարձնում նաև ճարտարապետությանն ու ստեղծագործական արվեստին: Հռոմի վերածննդի փառահեղության ու հզորության, բարեպաշտության և արտաքին վայելչության, նախնիների ավանդույթի և նույն Օգոստոսի ամենակարողության արտահայտությունը պետք է տարածվեր նաև այն խավի մեջ, որտեղ հռոմեացիները ծնվել էին, ապրել և մահացել, որը ձևավորել էր նրա հայրենասիրական զգացումները, բարոյական սկզբունքները և գաղափարական ուղղությունները: Պետության վեհությունը պետք է լիներ հասարակության կառույցի ավելի արդյունավետ ներգործությամբ ուղեղների վրա և սրտերի մեջ: Գրեթե այսպես էր ժամանակակից Մարկոս Օգոստոս Վիրտուվիոս Պիլլոնը ձևավորում քաղաքաշինական քաղաքականությունը և նրա գործերը անկասկած արտահայտում էին Օգոստոս Օգտավիանոսի տեսակետը:

Եվ հենց Օգոստոսի իշխանության գալուց հետո էր, որ բացարձակ կատարելության հասավ ճարտարապետությունը, որպես ամենաուժեղ

<sup>1</sup> Маленн А. И., Золотой век римской литературы (эпоха Августа), Пр., 1923, с. 9.

<sup>2</sup> Машкин Н. А., с. 557.

<sup>3</sup> Штаерман Е. М. Мораль и религия угнетенных классов Римской империи: Италия и западные провинции. М., 1961, с. 142.

գեղարվեստական ուղղություն պետական գաղափարախոսության իրականացման համար<sup>1</sup>:

Այս ժամանակաշրջանի արվեստը որոշ առումներով ավարտում էր նախորդ շրջանի Հռոմի արվեստի պատմության մի փուլը և տալիս էր նոր փուլի համար որոշակի ուղղվածություն<sup>2</sup>: Այս կարծիքի հետ համաձայնվելով՝ Բլավատսկին գտնում է, որ այս շրջանի ճարտարապետությունն ավելի անմիջական է և կրում է կայսերական փառահեղ ոճի շինություններ<sup>3</sup>: Իսկ ահա Վոշչինինան գտնում է, որ Օգոստոսի ժամանակաշրջանի հռոմեական արվեստը նախակլասիցիստական և հելլենիստական արվեստի յուրահատուկ վերամշակում է<sup>4</sup>: Վերջին հեղինակի մեկ այլ տեսակետով պրինցիպատի ժամանակաշրջանի հռոմեական արվեստը զարգանում է հելլենիզմի շղարշի տակ<sup>5</sup>: Թեև այս կարծիքները իրենց մեջ պարունակում են որոշակի ճշմարտություն, այնուամենայնիվ, Օգոստոսի ժամանակաշրջանի արվեստը ուղղակի ընդօրինակող չէր, այլ ուներ իր առանձին կնիքը, որը նկատելի է արվեստի բոլոր ուղղություններում և որ այն առանձին ուղղություն է հանդիսանում համաշխարհային արվեստի պատմության մեջ չի կարելի կասկածել:

Այսպես, ճարտարապետությունը Հռոմում հիմնականում կատարում էր հետևյալ գործառույթը՝ ամեն կերպ Օգոստոսին հասցնի աստվածների մակարդակին, ապացուցի Հուլիոսների տան աստվածային ծագումը ու դրանից բխեցնի նրա աստվածային իշխանությունը և նրա գործունեության իրավացիությունը: Սա արտահայտվում էր ոչ միայն ճարտարապետության, այլ նաև քանդակագործության, նկարչության և այլ կիրառական արվեստների մեջ: Դրանով Օգոստոսը կապ էր ստեղծել նաև կրոնի և վերը նշված արվեստների հետ, որոնք գործում էին մեկը մյուսին փոխլրացնելով:

Մշակութային կառավարման մոդելը իրենից ներկայացնում է մի շղթա, որի մեկ օղակը առանց մյուսի չի կարող գործել: Այդ շղթայի անբաժանելի մասերն են կազմում նախօրոք մտածված ուղին, որով կառավարման ամբողջ ընթացքում երկրի ղեկավարը առաջնորդվում է: Շղթայի հաջորդ ուղին այն գաղափարախոսությունն է, որը դրվում է շրջանառության մեջ: Այսինքն պետությունը ուղեգծում է իր համար առաջնային կարևորության մարտահրավերներ և կատարում է լուրջ պետական գաղափարախոսության մշակում, որը վերջնական արդյունքում կտանի այդ ծրագրի հաջող իրագործմանը: Շղթան եզրափակվում

<sup>1</sup> Голубцова Е. С., с. 376.

<sup>2</sup> Машкин Н. А. Принципат Августа, с. 589.

<sup>3</sup> Блаватский В. Д., Архитектура Античного мира, Москва, 1939, с. 103.

<sup>4</sup> Вошинина А. И., Античное искусство, Москва, 1962, с. 326.

<sup>5</sup> Вошинина А. И., Очерк истории древне-римского искусства, Ленинград, 1947, с. 55.

է այն անձերով, ովքեր օգտագործվում են այդ շրթան գործի դնելու համար:

Այսպիսով կարելի է ասել, որ Օգոստոս Օկտավիանոսի իրականացրած մշակութային քաղաքականությունը լավագույն օրինակներից է հանդիսանում համաշխարհային պատմության մեջ և դրա կենսագործման ամենադասական օրինակն է: Այս մոդելը գործածելի է եղել բոլոր ժամանակներում ու նաև այսօր և երբեք չի կորցրել իր կարևորությունը:

#### **Annotation**

The report presents the cultural policy of the first emperor August Octavian of Roman Empire. Here it is presented as a public policy model. We payed particular attention to a number of directions of cultural policy used by August, which were embodied in the state ideology, in particular based on reform in literature, art and religion. Relevance of this topic was and remains at all times and is relevant today, especially in those states and the circles of society, which stick to the reformish path.

#### **Аннотация**

В докладе представлена культурная политика первого императора Римской империи Августа Октавиана. Здесь это представлено как государственная идеологическая модель. В частности обращено внимание на ряд течений культурной политики Августа, которые воплощены в рамках государственной идеологии. В частности научно обоснованы реформы в литературе, искусстве и религии. Актуальность темы была и остается во все времена и актуальны сегодня особенно в тех государствах и в кругах общества, которые придерживаются реформистского пути.